

Կորոնավիրուսի վարակի (COVID-19) համավարակը արտակարգ մարտահրավերներ է առաջացրել բոլոր անդամ պետությունների իշխանությունների համար: Առկա են առանձնահատուկ և հրատապ մարտահրավերներ անձանց հարկադրաբար պահելու անազատության վայրերի աշխատակիցների համար՝ ներառյալ ձերբակալվածներին պահելու վայրերի, քրեակատարողական հիմնարկների, ներգաղթյալներին, հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց, ու կարանտինային վիճակով պայմանավորված անձանց նորաստեղծ կամ համապատասխան հաստատություններում, տարածքներում հարկադրաբար պահելու վայրերի հետ: Չանտեսելով կամ չնվազեցնելով Կորոնավիրուսային վարակի (COVID-19) դեմ խիստ ու պարտադիր պայքար մղելու անհրաժեշտությունը, ԽԿԿ-Ն հարկ է համարում հիշեցնել բոլոր իրավասուներին խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքի բացարձակ բնույթի մասին: Կանխարգելիչ կամ պաշտպանական միջոցները անազատության մեջ գտնվող անձանց համար չպետք է հանգեցնեն անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի: Կոմիտեի կարծիքով ներքոշարադրյալ սկզբունքները Եվրոպայի խորհրդի ամբողջ տարածքում պետք է ընդունվեն ու կիրառվեն բոլոր իշխանության իրավասու այն համապատասխան մարմինների կողմից, որոնք պատասխանատու են կամ ում որոշումներով անձինք զրկված են ազատությունից:

<p>1) Հիմնարար կամ առաջնային սկզբունքը պետք է լինի բոլոր հնարավոր միջոցների ձեռնարկումը պաշտպանելու ազատությունից զրկված անձանց առողջությունն ու անվտանգությունը: Նման միջոցների իրագործումը նպաստում է նաև աշխատակազմի առողջության ու անվտանգության ապահովմանը:</p>
<p>2) Անազատության մեջ պահելու բոլոր վայրերում պետք է պարտադիր և ամբողջությամբ պահպանվեն և կիրառվեն ինչպես ԱՀԿ, այնպես էլ ազգային առողջապահական մարմինների՝ համավարակի դեմ պայքարի, ուղեցույցներն ու կանոնները:</p>
<p>3) Անազատության մեջ պահելու բոլոր վայրերի կամ առնչություն ունեցող աշխատակիցները պետք է ստանան մասնագիտական աջակցություն ու վերազինվեն առողջության պահպանման և անվտանգության միջոցներով, ներառյալ՝ անցնեն վերապատրաստումներ, որ կարողանան պատշաճ իրականացնեն իրենց պարտականությունները:</p>
<p>4) Անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ COVID-19 համավարակի տարածումը բացառելու նպատակով կիրառված ցանկացած միջոցառում պետք է լինի օրենքի հիման վրա, լինի անհրաժեշտ, համաչափ, մարդկային արժանապատվության հարգելի իրավունքի պահպանմամբ և ժամանակային սահմանափակմամբ: Անազատության մեջ գտնվող անձինք նման սահմանափակումների մասին պետք է ստանան համապարփակ տեղեկատվություն իրենց հասկանալի լեզվով:</p>
<p>5) Հաշվի առնելով, որ միջանձնային շփումը նպաստում է վարակի տարածմանը՝ բոլոր համապատասխան իրավասու մարմինները պետք է համակարգված ջանասիրություն ցուցաբերեն, միջոցներ ձեռնարկեն ազատությունից զրկելու այլընտրանքներին դիմելու համար: Այս մոտեցումը առաջնահերթ պարտադիր է անազատության մեջ պահելու վայրերի գերբնակեցվածության դեպքում: Ավելին՝ իրավասու մարմինները պետք է ավելի լայնորեն կիրառեն մինչդատական կալանավորման այլընտրանքային միջոցները, պատիժների կրճատումը, վաղաժամկետ ազատման և փորձաշրջանի սահմանման</p>

հնարավորությունները: Հարկ է վերանայել հոգեբուժական հաստատություններում անձանց հարկադրաբար տեղավորելու որոշումները, վերանայել անձանց դուրս գրման կամ համայնքային խնամակալության մարմիններին հանձնելու ու աջակցություն ցուցաբերելու հնարավորությունը, որտեղ որ այն կիրառելի է: Բացի այդ պետք է հնարավորինս զերծ մնալ ներգաղթյալներին նկատմամբ անազատության հետ կապված սահմանափակումներ կիրառելուց:

6) Ինչ վերաբերում է առողջապահական աջակցության ապահովմանը, ապա հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել անազատության մեջ գտնվող խոցելի կամ ռիսկային խմբերում գտնվող անձանց, որոնք են տարեցները, արդեն իսկ առողջական խնդիրներ ունեցող անձինք: Սա ներառում է, ի թիվս այլով, COVID-19-ի թեստավորում, անհրաժեշտության դեպքում ինտենսիվ թերապիայի իրականացում: Բացի այդ, անազատության մեջ գտնվող անձինք անձնակազմի կողմից այս պահին պետք է ստանան լրացուցիչ հոգեբանական աջակցություն:

7) Թեև օրինական ու ողջամիտ է սահմանափակել ոչ էական գործունեությունը, սակայն անազատության մեջ գտնվող անձանց հիմնարար իրավունքները պետք է ամբողջությամբ ապահովվեն: Այն, մասնավորապես, ներառում է անձնական հիգիենայի ողջամիտ հասանելիություն (ներառյալ ջրի ու օձառի) և բացօթյա զբոսանքի կամ մաքուր օդի հասանելիության հնարավորություն (առնվազն մեկ ժամ տևողությամբ): Բացի այդ արտաքին աշխարհի հետ շփման ցանկացած սահմանափակում, ներառյալ տեսակցությունները, պետք է փոխհատուցվեն այլընտրանքային հեռահաղորդակցության միջոցների ավելացմամբ կամ դրանց հաշվին (օրինակ՝ հեռախոս կամ տեսաձայնային ինտերնետ կապ):

8) Վարակված կամ վարակի կասկածով կարանտինում մեկուսացված անազատության մեջ գտնվող անձանց հետ ամենօրյա շփումը պետք է իրականացվի տրամաբանական ողջամտության սահմաններում:

9) Անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու երաշխիքները իրավապահ մարմինները պետք է ապահովվեն բոլոր փուլերում և իրավիճակներում: Կանխարգելիչ միջոցները (օրինակ՝ նախնական ախտանիշներ ունեցող անձանց պաշտպանական դիմակներ կրելու պահանջը) կարող են տեղին լինել որոշ հանգամանքներում:

10) Անկախ մարմինների մշտադիտարկումը, ներառյալ կանխարգելիչ ազգային մեխանիզմներն ու ԽԿԿ-ն, շարունակում է լինել վատ վերաբերմունքից զերծ մնալու դեմ հիմնական երաշխիքը: Պետությունները պետք է շարունակեն երաշխավորել մշտադիտարկման մարմինների՝ մուտքի հնարավորության պահպանումը բոլոր անազատության մեջ պահելու վայր, ներառյալ այն վայրերը, որտեղ մարդիկ պահվում են կարանտինում: Այնուամենայնիվ, բոլոր այդ մշտադիտարկման մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր կանխարգելիչ միջոցառումները՝ «մի վնասիր» սկզբունքը, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ գործ ունեն տարեցների և բժշկական-առողջական ցուցումներ կամ պատմություն ունեցող անձանց հետ: